Հավելված
ՀՀ վարչապետի 2016 թ.
Սեպտեմբերի 2 -ի N 803 - Ա
որոշման

ՑԱՆԿ

««ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Իրավական ակտի տեսակն ու վերնագիրը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը | Իրավական ակտի նախագիծը մշակող և ընդունող պատասխանատու պետական մարմինները | Իրավական ակտն ընդունելու առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի մատակարարած էլեկտրական էներգիայի դիմաց հատուցում տրամադրելու կարգի սահմանում | 2016 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)<br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2. | «Մարդու կյանքին և (կամ) շրջակա միջավայրին վտանգ սպառնացնող (վտանգավոր նյութեր պարունակող) էներգաարդյունավետ սարքերի, սարքվածքների և արտադրանքի ցանկը, այդ ցանկում ընդգրկված էներգաարդյունավետ սարքերի, սարքվածքների և արտադրանքի Հայաստանի Հանրապետությունում շուկայահանման պայմանների՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ինչպես նաև դրանց շահագործումից հետո օգտահանման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | 2018 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ: |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 3. | «Տնտեսության ճյուղերն ըստ էներգատարության՝ բարձր, միջին և ցածր սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | 2018 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ